

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ

ԵՎ

ՔԵՄՈՆԻՔՍ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՎՃԻՌՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԵՐԵՎԱՆ 2002

ASSOCIATION OF JUDGES OF THE REPUBLIC OF ARMENIA

SPONSORED BY
THE COUNCIL OF EUROPE
AND
CHEMONICS INTERNATIONAL INC.

COLLECTION OF JUDGMENTS
OF EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS

Մասնագիտական խմբագիր

YEREVAN 2002

Ալվինա Գյուլումյան
ՀՀ սահմանադրական դատարանի անդամ,
ՀՀ դատավորների միության նախագահ

Պատասխանատու խմբագիր

Լիանա Հակոբյան
ՀՀ սահմանադրական դատարանի
աշխատակազմի գլխավոր մասնագետ

Լեզվական խմբագիր

Աիդա Կարապետյան

Ժողովածուի մեջ ընդգրկված վճիռները անգլերենից թարգմանել են.

Լուսինե Պողոսյանը
Մարինա Մխիթարյանը
Սուսաննա Բաղդասարյանը
Կարինե Բալայանը

ԳԻԼՈՈՒՆԵՐՆ ԸՆԴԴԵՄ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ
ԵՎ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԻՈՒԱՆԴԻԱՅԻ
ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ

CASE OF THE GILLOW v. THE UNITED KINGDOM OF
GREAT BRITAIN AND NORTHERN IRELAND

(Գանգատ թիվ 13/1984/85/132)

Ղատարանի 1987թ. օգոստոսի 25-ի վճիռը

Ստորասրույթ

Գիլլունների գործով,
Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի («Կոնվենցիա») 43-րդ հոդվածի և Ղատարանի կանոնակարգի համապատասխան դրույթների համաձայն՝ որպես Պալատ, հետևյալ դատավորների կազմով՝ պրն Գ. Վիարդա, Նախագահ, պրն Ռ. Ռիսդալ, պրն Ջ. Քրեմոնա, պրն Վ. Գանշոֆ վան դեր Մեերշ, պրն Ֆ. Գյոլքյուքյու, սըր Վինսենթ Էվանս, պրն Կ. Ռուսո, նաև պրն Մ.-Ա. Էյսեն, Քարտուղար, և պրն Հ. Պետցոլդ, Քարտուղարի տեղակալ, 1987թ. մայիսի 22-ի, օգոստոսի 24-ի և 25-ի դռնփակ խորհրդակցություններից հետո 1987թ. օգոստոսի 25-ին ընդունել է հետևյալ վճիռը:

ՎԱՐՈՒՅԹԸ ԵՎ ՓԱՍՏԵՐԸ

1. Գործը Ղատարան է հանձնվել Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի («Հանձնաժողով») կողմից՝ 1984թ. դեկտեմբերի 19-ին: Գործի համար առիթ է հանդիսացել 1980թ. Մեծ Բրիտանիայի քաղաքացիներ պրն Ջոզեֆ և տկն Իվոն Գիլլունների կողմից Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության դեմ Հանձնաժողով ներկայացված գանգատը (թիվ 9063/80):

2. 1986թ. նոյեմբերի 24-ի վճռով Ղատարանը գտել է, *inter alia*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում՝ դիմողների գործի նկատմամբ Գրնսիի բնակարանային օրենսդրության կիրառման եղանակի պատճառով (Շարքեր Ա, թիվ 109, պատճառաբանական մասի 57-58-րդ կետեր և նկարագրական մասի 2-րդ կետ, էջեր 23-24 և 29):

Լուծման ենթակա միակ հարցը 50-րդ հոդվածի կիրառման հարցն է: Ինչ վերաբերում է փաստերին, պետք է համապատասխանաբար հիմնվել վերը նշված վճռի 9-37 կետերի վրա (*ibid.*, էջեր 8-17):

3. Դիմողները 50-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ իրենց դիրքորոշումը չեն արտահայտել մինչև Դատարանի ըստ էության վճռին ծանոթանալը: Նշված պայմաններում, ո՛չ Միացյալ Թագավորության կառավարությունը («Կառավարություն») և ո՛չ էլ Հանձնաժողովը չեն կարողացել որևէ տեսակետ արտահայտել նշված հարցի վերաբերյալ:

Համապատասխանաբար, 1986թ. նոյեմբերի 24-ի վճռով Դատարանը հետաձգել է հարցի լուծումը և հրավիրել է դիմողներին, որոնց Դատարանի կանոնակարգի 30-րդ կանոնի համաձայն պատշաճորեն ներկայացնում էր փաստաբանը, հետագա երեք ամիսների ընթացքում ներկայացնել իրենց՝ արդարացի բավարարում ստանալու վերաբերյալ հնարավոր պահանջը (ibid., պատճառաբանական մասի 76-րդ կետ և նկարագրական մասի 6-րդ կետ, էջ 29):

4. Պատշաճորեն փաստաբան նշանակելուց հետո պրն և տկն Գիլոունները 1987թ. փետրվարի 17-ի դիմումով պահանջել են արդարացի բավարարում՝ նյութական և բարոյական վնասների դիմաց, ինչպես նաև դատական ծախսերի և ծախքերի դիմաց:

Նախագահի կարգադրությունների հիման վրա Կառավարությունն ապրիլի 24-ին ներկայացրել է գրավոր բացատրություններ: Մայիսի 19-ին Հանձնաժողովի քարտուղարը տեղեկացրել է Դատարանի քարտուղարին, որ իրենց պատվիրակը մտադիր չէ որևէ բացատրություն ներկայացնելու:

5. 1987թ. մայիսի 22-ին Պալատը որոշել է, որ նշված հանգամանքներում կարիք չկա բանավոր լսումներ անցկացնելու, և հանձնարարել է Քարտուղարին՝ պահանջել դիմողներից ներկայացնելու իրենց պահանջած դատական ծախսերի և ծախքերի մանրամասն հաշվետվությունը: Այս տեղեկությունը Պալատն ստացել է 1987թ. հուլիսի 20-ին և օգոստոսի 3-ին: Կառավարությունն ու Հանձնաժողովն իրենց դիտողությունները ներկայացրել են համապատասխանաբար՝ 1987թ. օգոստոսի 5-ին և 21-ին:

6. Հունիսի 30-ին տկն Գիլոուն տեղեկացրել է Դատարանին, որ իր ամուսինը մահացել է 1987թ. հունիսի 8-ին:

7. Հետագայում, փոխարինող դատավորներ պրն Քրեմոնան, պրն Գանշոֆ վան դեր Մեերշը, պրն Գյոլքյուքյուն և պրն Ռուսոն փոխարինել են պրն Թոր Վիլյալմսոնին, պրն Լագերգենին, պրն Պետիտիին և պրն Մակդոնալդին, որոնց չէր թույլատրվել մասնակցել 1987թ. օգոստոսի 24-ի և 25-ի վերջնական խորհրդակցությանը (կանոն 22, կետ 1 և կանոն 24, կետ 1):

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐԸ

8. Կոնվենցիայի 50-րդ հոդվածի հարցով.
«Եթե Դատարանը գտնում է, որ Բարձր պայմանավորվող կողմի իշխանության օրինական մարմնի կամ որևէ այլ իշխանության մարմնի կողմից որոշում կայացնելը կամ պատժամիջոց կիրառելն ամբողջովին կամ մասնակիորեն հակասում է ... Կոնվենցիայով սահմանված պարտականություններին, և եթե նշված կողմի ներպետական օրենքը թույլ է տալիս, որ միայն մասնակի փոխհատուցում տրամադրվի այդ որոշման կամ պատժամիջոցի հետևանքների համար, Դատարանը՝ իր որոշմամբ, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի բավարարում կտրամադրի»:

9. Պրն և տկն Գիլոունները արդարացի բավարարում են պահանջել նյութական և բարոյական վնասների, ինչպես նաև դատական ծախսերի և ծախքերի դիմաց:

Ավելին, Դատարանում վարույթի ընթացքում նրանք Դատարանին խնդրել են կարգադրել, որ Կառավարությունը վերականգնի Գրնսիի առնչությամբ իրենց՝ «բնակության ցենզը»: Սակայն, Կոնվենցիայի համաձայն, Դատարանը իրավագոր չէ անելու նմանատիպ կարգադրություն (տե՛ս mutatis mutandis, Մակ Գոֆի 1984թ. հոկտեմբերի 26-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 83, էջ 28, կետ 31):

I. Նյութական վնաս

10. Պրն և տկն Գիլոունները հայտարարել են, որ իրենք ստիպված են եղել վաճառել իրենց «Whiteknights» տունը՝ մշտական և ժամանակավոր թույլտվության մերժման հետևանքով (տե՛ս վերը նշված՝ Գիլոունների վճիռը, Շարքեր Ա, թիվ 109, էջեր 9-11, կետեր 15, 16 և 20), և որ իրենք ստիպված են եղել ընդունելու շուկայական իրական

արժեքից ավելի ցածր գին, քանի որ այն ժամանակամիջոցում նրանք ի վիճակի չեն եղել սակարկելու առաջարկված արժեքի շուրջ: Այնուհետև, նրանք պնդել են, որ իրենց վճարվելիք փոխհատուցումը պետք է ներառի «Whitknights»-ի վաճառքից ստացած եկամտի և փոխարենը՝ Գրնսիում սեփականություն գնելու համար պահանջվող գումարի միջև տարբերությունը կազմող գումարը: Այսպիսով, նրանց պահանջած ընդհանուր գումարը կազմել է 50,000 ֆունտ ստերլինգ: Նրանք փոխհատուցում են պահանջել նաև «Whitknights»-ի վաճառքով զբաղվող՝ անշարժ գույքի գործակալներին վճարված վարձատրության, ինչպես նաև տան գնահատման հետ կապված ծախսերի դիմաց, որը կազմում է 735 ֆունտ ստերլինգ:

Կառավարությունը վիճարկել է նշված պահանջները: Կառավարության կարծիքով, խնդրո առարկա վաճառքը հետևանք չէր թույլտվությունների մերժման և ամեն դեպքում վաղաժամ էր, քանի որ այն կատարվել էր մինչև տկն Գիլոուի գանգատի վերաբերյալ Թագի դատարանի վճիռ կայացնելը (ibid., էջ 12, կետեր 24-25): Բացի դրանից, վաճառքի և փոխարենը՝ սեփականություն գնելու հետևանքով դրամական կորստի վերաբերյալ պահանջները ճշգրիտ և փաստերով հիմնավորված չէին:

11. Եիշտ է, որ թույլտվությունների մերժումը դիմողներին չէր պարտավորեցնում վաճառել «Whitknights»-ը, քանի որ ոչինչ չէր խանգարում նրանց՝ սեփականությունը վարձով հանձնելու: Համենայնդեպս, քանի որ նրանց մերժել էին այդ տանը բնակվելու թույլտվությունը, Դատարանը չի գտնում, որ տունը վաճառելու նրանց որոշումն անհիմն է եղել: Հետևաբար, վերը նշված վճարումների ընդհանուր գումարը՝ 735 ֆունտ ստերլինգ, պետք է փոխհատուցվի:

Ինչ վերաբերում է վաճառքի հետևանքով ենթադրյալ կորստին, Դատարանը նշում է, որ դիմողների ստացած գումարը եղել է անշարժ գույքի գործակալների կողմից արված նախնական գնահատման արժեքի սահմաններում (տե՛ս Հանձնաժողովի զեկույցի 150 կետը): Ապացուցված չէ, որ վաճառքի գինը տվյալ պահին առկա

շուկայական արժեքից ավելի ցածր է եղել: Յետևաբար, այս կապակցությամբ պահանջը չի կարող ընդունվել:

12. Դիմողները հայտարարել են, որ եթե նրանց թույլատրվեր բնակվել Գրնսիում, ապա նրանք հետագա չորս տարիների ընթացքում հնարավորություն կունենային այնտեղ աշխատելու՝ յուրաքանչյուրը տարեկան 8,000 ֆունտ ստերլինգ աշխատավարձով. պրն Գիլոուն՝ որպես այգեգործության հարցերով խորհրդատու, իսկ տկն Գիլոուն՝ որպես ուսուցչուհի: Ուստի նրանք պահանջել են 64,000 ֆունտ ստերլինգ՝ վաստակի կորստի դիմաց:

Դատարանը համակարծիք է Կառավարության հետ, որ նշված պահանջը պետք է մերժվի, քանի որ ոչ մի հիմք չկա ենթադրելու, որ նշված ժամանակահատվածում դիմողներն իրենց մասնագիտություններով աշխատանք կգտնեին Գրնսիում:

II. Բարոյական վնաս

13. Ի հատուցում բարոյական վնասի՝ դիմողները պահանջել են 100,000 ֆունտ ստերլինգ: Ըստ նրանց՝ 1987 թվականից նրանք զգալի վնաս են կրել բնակարանային հարցերով մարմինների որոշումների հետևանքով: Այս երկարատև ժամանակահատվածում նրանց ճնշել է խաղաղ գոյակցության անկարողությունը: Իրենց՝ իրենց տան իրավունքի նկատմամբ հարգանքի մերժումը և ժամանակավոր թույլտվությունը մերժելու արդյունքում հետագա շարունակվող դժվարությունները նրանց խիստ լարվածություն և հուզմունք են պատճառել:

Կառավարությունը առարկել է այդ պահանջի դեմ՝ նշելով, որ այս գործի հանգամանքներում Կոնվենցիայի խախտման փաստը Դատարանի կողմից

հաստատելն արդեն հանդիսանում է համապատասխան և արդարացի բավարարում նշված պահանջի առումով: Որպես այլընտրանք՝ Կառավարությունը պնդել է նաև, որ պահանջված գումարը չափից ավելի է, և առաջարկել է 1,000 ֆունտ ստերլինգ:

14. Դատարանի կարծիքով՝ պրն և տկն Գիլոուներն իրոք զգալի բարոյական վնաս են կրել, որը չի կարող բավարարվել միայն խախտման փաստի հաստատմամբ: Մեկ տարվա ընթացքում նրանք ապրել են անապահովության զգացում, քանի որ անորոշ վիճակում են գտնվել, և չեն իմացել՝ արդյո՞ք իրենց վերջապես թույլ կտան բնակվելու իրենց տանը, թե՞ կվտարեն այնտեղից: Բացի դրանից, իրենց տան ապօրինի բնակեցման հետևանքով հետապնդումը գումարվել է իրենց արդեն իսկ անհուսալի վիճակին (տե՛ս վերը նշված Գիլոուների վճիռը, Շարքեր Ա, թիվ 109, էջ 23, կետ 57): Այս ամենի հետևանքով նրանք պարտադրված են եղել վաճառել իրենց Գրնսիի տունը և բնակվել մեկ այլ վայրում, որի արդյունքում պետք է որ զգալի լարվածություն և հուզումնաբան ապրած լինեին:

15. Հաշվի առնելով գործին վերաբերող բոլոր գործոնները և, ինչպես պահանջվում է 50-րդ հոդվածով, արդարացիորեն գնահատելով՝ Դատարանը այս կապակցությամբ դիմողին տրամադրում է 10,000 ֆունտ ստերլինգ:

III. Ծախքեր և ծախսեր

16. Դիմողները փոխհատուցում են ակնկալել իրենց կրած զանազան ծախսերի դիմաց:

Կառավարությունը նշել է, որ դիմողների նշած ծախսերը հիմնավորող ոչ մի փաստաթուղթ չի ներկայացվել, և պնդել է, որ դրանցից մի քանիսն անհրաժեշտ չեն, կամ գումարը չափից ավելի է:

17. Այս կապակցությամբ Դատարանը քննել է պահանջները՝ համաձայն իր նախադեպային իրավունքում սահմանած չափանիշների (տե՛ս այլ աղբյուրների թվում՝ Ջիմերմանի և Ստայների 1983թ. հուլիսի 13-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 66, էջ 14, կետ 36):

(ա) Ջանազան ծախսեր

18. Դիմողները 634 ֆունտ ստերլինգ են պահանջել Գրնսիում կրած իրավաբանական, դատական և այլ ծախսերի դիմաց: Կառավարությունն այս կետերով չի առարկել: Դատարանն ընդունում է այս գումարը՝ գտնելով, որ այն ողջամիտ է:

(բ) ճանապարհածախս և օրապահիկ
19. Դիմողները հետևյալ կետերով փոխհատուցում են անկնկալել ճանապարհածախսի և օրապահիկի դիմաց.

(i) Դատարանի և Հանձնաժողովի քարտուղարությունների հետ խորհրդակցելու նպատակով իրենց Ստրասբուրգ կատարած հինգ այցելություններ (1,950 ֆունտ ստերլինգ),

(ii) 1982թ. դեկտեմբերի 9-ին իրենց այցելությունը Ստրասբուրգ՝ Հանձնաժողովում անցկացվող լսումներին մասնակցելու համար (600 ֆունտ ստերլինգ),

(iii) 1986թ. նոյեմբերի 24-ին իրենց այցելությունը Ստրասբուրգ՝ Դատարանի վճռի հրապարակմանը (600 ֆունտ ստերլինգ),

(iv) Դատարանի՝ 1986թ. փետրվարի 18-ի լսումների հետ կապված՝ պրն Դանի ծառայությունները (1,300 ստերլինգ):

1986թ. փետրվարի 18-ի լսումներին մասնակցելու համար իրենց այցելության հետ կապված դիմողները ոչ մի պահանջ չեն ներկայացրել, քանի որ նրանց ծախսերը վճարել էր Եվրոպայի խորհուրդը:

20. (i)-ին կետում նշված ծախսերը հիմնավորող ոչ մի փաստաթուղթ չի ներկայացվել, համեմայնդեպս, Դատարանը, միևնույն է, չի կարող ընդունել այդ կետը: Խորհրդակցությունների ընթացքում քննարկված հարցերը կարելի էր քննարկել նամակագրության միջոցով, հետևաբար, այս ծախսերը չեն կարող համարվել անխուսափելիորեն կատարված:

Նույնը վերաբերում է (iv)-րդ կետին: Պրն Դանը Դատարանի նիստին ներկայացել է իր ազատ կամքով, և Դատարանը նախապես չէր տեղեկացվել նրա ներկայության մասին: Նա չի գործել ո՛չ որպես դիմողների ներկայացուցիչ, ո՛չ էլ որպես Պալատի Նախագահի կողմից հավանություն ստացած՝ դիմողներին իրավաբանական օգնություն տրամադրող անձ (Դատարանի կանոնակարգի 30 կանոն):

21. Մյուս կողմից, Դատարանը համարում է, որ (ii)-րդ և (iii)-րդ կետերում նշված ծախսերը կարելի է համարել անխուսափելի: Դիմողները իրենք են ներկայացրել իրենց գործը Հանձնաժողովում, հետևաբար, նրանք պարտավոր էին ներկա գտնվել Հանձնաժողովում անցկացվող լսումներին: Դատարանը նշում է նաև, որ 1986թ.՝ Դատարանում վճռի հրապարակմանը նրանց ներկայությունը հիմնավորված է եղել: Ի տարբերություն «Սանդի թայմս»-ի գործի, որում Կառավարությունն այս կետի վրա էր հիմնվում (տե՛ս 1980թ. նոյեմբերի 6-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 38, էջ 16, կետ 35)՝ պրն և տկն Գիլոունների շահերը ներկայացնող փաստաբան այդ պահին դեռևս չկար:

Դատարանը ողջամիտ է համարել (ii)-րդ և (iii)-րդ կետերով պահանջած գումարները և,

հետևաբար, երկուսն էլ տրամադրել է:

(գ) 50 հոդվածի կիրառման կապակցությամբ դատավարությանն առնչվող ծախսերը

22. Ի վերջո, դիմողները պահանջել են 1,000 ֆունտ ստերլինգ՝ 50 հոդվածի կիրառման կապակցությամբ դատավարության ընթացքում՝ իրենց շահերը ներկայացնող փաստաբան պրն Բենչինիի հոնորարի դիմաց: Նշված հոնորարը Դատարանի կարգադրության համաձայն էր (տե՛ս վերը նշված Գիլոունների վճիռը, Շարքեր Ա, թիվ 109, նկարագրական մասի 6 (բ) կետ, էջ 29): Ինչ վերաբերում է

գումարի չափին, հաշվի առնելով այդ փաստաբանի սահմանափակ դերը դատավարության վերջին փուլում, Ղատարանը ողջամիտ է համարել 300 ֆունտ ստեռլինգ (երեք հարյուր ֆունտ ստեռլինգ):

IV. Տրամադրված գումարների վճարումը

23. Քանի որ այս գործը վերաբերում է դեպքերի և դրանց հետևանքների, որոնք կապված են եղել պրն և տկն Գիլոունների հետ, Ղատարանն արդարացի է համարել այս վճռով տրամադրվող բոլոր գումարները վճարել նրանցից ողջ մնացած՝ տկն Գիլոունին:

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ

1. Վճռում է, որ Միացյալ Թագավորությունը պետք է տկն Գիլոունին վճարի 10,735 ֆունտ ստեռլինգ (տասը հազար յոթ հարյուր երեսունհինգ ֆունտ)՝ ի հատուցում վնասների, և 2,134 ֆունտ ստեռլինգ (երկու հազար հարյուր երեսունչորս ֆունտ)՝ որպես դատական ծախսեր և ծախքեր,

2. Մերժում է արդարացի բավարարման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով և ֆրանսերենով, ծանուցված է գրավոր կարգով 1987թ. սեպտեմբերի 14-ին՝ համաձայն Ղատարանի կանոնակարգի 54 կանոնի 2 կետի՝ 2 ենթակետի:

Մարկ-Անդրե Էյսեն
Քարտուղար

Գերարդ Վիարդա
Նախագահ